

ՏԵՐ ԵՒ ՏՆՕՐԷՆ
 Ե. ԹՈՐՈՍՅԱՆ
 Եամակ կամ սր և և
 գրու թիւն պէտք է ուղղել առ
 Տեղիւն ԱՐՇԱՆՈՅՍ րուգրի
 ԳԱԶԻՔԷ (Եգիպտոս)

ԱՐՇԱՆՈՅՍ

ԲԱԺԱՆՈՐԳԱԳՐՈՒԹԻՒՆ
 ԵԳԻՊՏՈՍԻ ԶԱՄԱՐ
 Տարեկան ողջ դրանք 60
 Վեցամսեայ » 35
 ՕՏԱՐ ԵՐԿԻՐՆԵՐ
 Տարեկան Ծրակ 20
 Վեցամսեայ « 12

E. TOROSSIAN
 Direc.-propr. du journal arménien
 A. ROHALOUCHE
 LE CAIRE (EGYPTE)

Լ Ր Ա Գ Ի Ր

ԱԶԳԱՅԻՆ ԳՐԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹ ԶՈՐԵՔԵԱԹԻ ԵՒ ԵԱՐԱԹ ՕՐԵՐԸ

ԲԱԺԱՆՈՐԳԱԳՐՈՒԹԻՒՆԸ ԿԱՆԵՆԻԿ
 Եւ թղթատարի ծախքը
 Խնրագրութեան վրայ է :
 Խնրագրութեան ուղղութեամբ
 գրութիւնք և չ'են տրուիր
 Ա.Զ.Գ.Ա.Ր.ՈՒԹԻՒՆԻ
 Կանխիկ վճարելի էն

ԸՆԶԱՔԱՂՏՈՒԹԻՒՆ

ԱՄՈՒՐԻ ԵՐԻՏԱԾԱՐԻՆԵՐԸ

(Շարուն նախորդ թիւէն եւ վերջ)

Թէ ի՛նչպէս պարզենք մեր բաժնը :
 Այն պահուն, երբ հայ երիտասարդը
 կիսաւարտ դասընթաց մը բոլորելէ և միջ-
 նակարգ ուսում ու կրթութիւն ստանալէ
 յետոյ կը թողու վարժարանը, և երբ իր
 օրապահիկը հայթայթելու համար ասպարէզ
 կը նետուի ս'է կը զբաղու մը պարապելու
 համար, իսկոյն իւր միտքը վերացական
 խորհրդածութիւններով կը պաշարուի .
 այնպէս որ ս' ի՛նչ իւր ընտրած ասպարէզին
 մէջ մեծաքայլ յառաջադիմելու և բարոյա-
 կան փայլուն ապագայ մը պատրաստելու
 համար են ասոնք, այլ առաջին քայլին
 մէջ իսկ հարուստ, խիստ հարուստ, Ռօշըլտ
 մը, Հիւրը մը, Պառնաթօ մը ըլլալու խօս առ-
 նուրով կը հալի ու կը մաշի : Ժամանակ
 մը իր գիտաւարտութիւնները իրականացնելու
 յուսով քրտնաթոր ու անխոնջ աշխատու-
 թեամբ մը իր անձը կը նուիրէ գործին : Եւ
 երբ կը տեսնէ թէ լոկ պարզ աշխատու-
 թեամբ մը կարելի չ'ըլլար առաջին պատե-
 հութեամբ նիւթական հնկայ ուժ մը գոյա-
 ցընելով մը քանի հարիւր ոսկիներ դիզել,
 ուստի դժգոհ իւր ունեցած առօրեայ կա-
 նոնաւոր պէտքէն, զոր խիստ սահմանա-
 վակ կը նկատէ, իսկոյն ընչաքաղցութեան
 անարգ զգացումներով կ'սկսի օրօրուիլ,
 նորանոր հնարամտութիւններ խորհելով :
 Այն պահուն սպանիական գրեականները
 մէկ վայրկեանի մէջ կը շինէ ու կը քոն-
 դէ

Հաշիւ հաշիւի վրայ . մի քանի թերթ
 թուղթ մրտտելէ, չորս գործողութեանց
 կանոններու շնորհիւ հանում, բաժանում,
 բազմապատկութիւն ընելէ յետոյ, վեր-
 ջապէս որոշեալ արդիւնքը ձեռքի առկ
 կ'ունենայ, որ է՝ օրինակի աղագաւ, 300
 ոսկի, որն որ իր փափարներուն լիւրջ
 գոհացում և բաւարարութիւն պիտի տայ :
 Ամենագիտար կէտը որ կը ներկայանայ
 այժմ՝ այդ գումարը գտեղծելն է : սակայն
 իր վրայ թիւնութիւնը և կուգրեռուն խոր-
 հրդածութիւնները առիթ կուտան իրեն,
 որպէսզի յմնգզնի առանց վարանելու և
 առանց իր արժանիքը կշռելու — թէ ինքը
 300 փարա կ'արժէ կամ չ'արժէր — յիմար
 գաղափար մը կ'ունենայ այդ համետ կար-
 ծուած գումարը՝ այս ինչ կամ այն ինչ

աղայէն փրցնել իւր դրամօժիտ, միևնոյն
 ատեն անոր աղկան ձեռքը խնդրելով :

Այսպէս թէ այնպէս հարուստ աղանե-
 րու հասցնելուն նամակներու տեղադրարափ
 մը կ'սկսի . նամակ մը հոս, նամակ մը հոն—
 պարունակութեան հետամուտ ըլլալու և
 հետաքրքրուելու հարկ չկայ — որովհետեւ
 դա շատ պարզ է կուսնել թէ՛ նամակին
 նիւթ մատակարարողը այն ինչ աղային
 աղիկը՝ բազմապատկեալ 300 ոսկիին հետն է :

Այլ ժամանակը եկած է . ամուսնու-
 թեան վրայ իր կազմած գաղափարները
 օրըստօրէ կ'աճին ու կ'ուճանան իր մըտ-
 քին մէջ . Մօլիէրի երեւակայական հիւանդն
 է . իր երեւակայութեամբ մէջ կը իրեն խը-
 պոտ ձայնն է որ միանուագ կուգայ իր ա-
 կանջին թմբուկը պայթեցնել, որ է « առ-
 եալ զձեռն երեք հարիւր ոսկինց Եւայի նու-
 Պէտք է գիտնալ որ այս կարգի երիտա-
 սարդներուն թիւը հետզհետէ ստուարացած
 է . ընչաքաղցութեան սղին ասոնց սրտին
 ու մտքին մէջ արմատացած է . նորանոր
 ամուսնութիւններ կը կատարուին, սակայն
 աւելի սա կէտը ուշադրութեան առարկայ
 եղած է թէ՛ այդ կատարուած ամուսնու-
 թիւններուն շատերը միշտ առուտուրի ձե-
 ւով եղած են : Այս, մեր երիտասարդները
 կ'ամուսնանան և կամ կը փափաքին ամուս-
 նանալ լոկ չափանդութեան գիտումներով .
 բայց և այնպէս սկէտք է նկատողութեան
 առնել թէ՛ այս կարգի ամուսնութիւնները
 սովորաբար անյարմար ամուսնութիւններ
 եղած և թէ օրինաւոր վարձան մ'ալ ու-
 նեցած չեն երբէք :

Արդէն հայ մտնուը շատ ու շատ ըզ-
 բաղած է դրամօժիտի խնդրով, դժելով
 միանգամայն այդ աղտոտ ու գռեհիկ սո-
 վորութեան ընկերական կեանքին հասցու-
 ցած բազմազան չարիքները . հետեւաբար
 մենք աչքի առաջ ունենալով « Արշալայս » ի
 ծաւալը ու անոր անձուկ էջերը դրամօժի-
 տի մասին ուէ ակնարկութիւն ընելու
 նպատակէն հրաժարեցանք, որքան որ մեր
 ընտրած նիւթին հետ ալ սերտ առնչութիւն
 ունէր նա :

Այս մասին մեր ընելիք տեսութիւն-
 ները ապագային վերապահելով, կը վեր-
 ջացնենք առ այժմ մեր խօսքը և կ'առա-
 ջարկենք ամուրի երիտասարդներուն որպէս-
 զի երբ ամուսնունալու վճեմ գաղափարը
 յղանան, ընտանիք առն, տեղ կազմե-
 լու բարի դիտաւորութեամբ ճամբայ ելլեն,
 և անոր համեմատ ընտրեն իրենց համար
 աւելի յարմարագոյն ընկերը, որուն հետ
 ստիպուած են մինչև ցիտհ կենակցելու :

Իսկ եթէ դրամօժիտ առնելու ագահութե-
 նէն մըտած ցանկութիւն կը յայտնեն ա-
 մուսնանալու՝ շատ բնական է թէ այդպիսի-
 ները դրամին խաթերն համար պիտի կուրա-
 նան և չպիտի կարողանան կշռել առաջին պա-
 տեհութեամբ այն ամեն անյարմարութիւն-
 ներ ու անպատեհութիւնները, որոնք կը
 ներկայանան իրենց առաջ :
 Կահիրէ 4 Մարտ 1901 Բ . Ե .

ԸՆԿԵՐԱԿԱՆ ԽՈՐՀՐԳԱԾՈՒԹԻՒՆԻՔ ԲԱՐԵԿԱՍՈՒԹԻՒՆ

Մեր նախնիքները բարեկամութեան աւելի
 կարեւորութիւն կուտային հին ժամանակները
 քան այժմ կը տրուի անոր : Բարոյագիտու-
 թեան վրայ գրող գրեթէ բոլոր դասական հե-
 ղեանակներ՝ բարեկամութիւնն իւր աստօրնու
 թիւն նկատելով, անոր համար մասնաւոր տեղ
 մը կը յատկացունէին իրենց երկերուն մէջ :
 Արիստոտէլի « Բարոյագիտութիւն » ատունը հըռ-
 չակաւոր գրքին մէջ, ինք գլուխներուն երկու-
 քը բարեկամութեան ատրեքը կրեւոյթներուն
 վրայ կը խօսի :

Սակայն նախնեաց ըմբռնումն այս մասին
 ատրեք էր մերինն : Ինչպէս որ ուրիշ շատ
 մը խնդիրներ յեղաշրջման ենթարկուած են ար-
 զի քաղաքակրթութեան ազդեցութեամբ տակ .
 նոյնպէս և բարեկամութիւն՝ ընկերութեան
 ներկայ վիճակին համաձայն բարեփոխներ
 կրած և նոր ու ազնիւ պաղտաբներ ստացած
 է : Առաջները բարեկամութիւնն անձուկրու-
 թեան վրայ հաստատուած կը նկատուէր : Արիս-
 տոտէլ կ'ըսէ « Բարեկամութեան հիմը փոխադարձ
 յարաբերութիւնն է գոյացած չափ կամ հաճոյքին
 մէջ կը կայանայ » : Այս տեսութեամբ կարելի
 չէ փափաքել որ մեր բարեկամը բարձրանայ
 այնպիսի գիրքի մը, որ այլեւս մեզ հետ յա-
 բարեբութիւն ընելու անկարող գտնուի : Բայց
 ճշմարիտ բարեկամութիւնն, որ քրիստոնէական
 սիրոյ վրայ հաստատուած և քաղաքակրթու-
 թեան լուսովը սնած է, չէ թէ միայն կը փա-
 փաքի, այլ կ'աշխատի որ իր բարեկամը յա-
 աջանայ, բարձրանայ :

Գաղափարը թէ՛ բարեկամութիւնը կարելի
 է միայն հաւատարմութեամբ մէջը բոլորովին սխալ
 է . յաճախ տեսնուած է որ իբարմէ խիստ տար-
 քեր գիրք ունեցող և ընկերական տարքեր մա-
 կարդակի վրայ գանուող անձաներ իբարու հետ
 խիստ մտերմացած են : Օգտուտո կայսրը ա՛յն
 աստիճան մտերմացու Ալքիպպասի հետ, թէեւ
 սա ստորին ծնունդէ սերած էր, որ չէ թէ մի-
 այն զայն իր բարեկամը վրայդ, այլ անոր իր
 քոյրը կ'իտութեան սուտ և զի նորը չ'ամանա-
 տար կարգեց ամբողջ բանակին վրայ : Առանց
 արտաքին պարտքաններ նկատողութեան ստեղ-
 լու, բարեկամութեան ճշմարիտ հիմը երկու
 բարեկամներու բնաւորութեան նմանութեան մէջ
 կը գտնուի . այնպիսի գտնապանութիւններով,

որ բազմաթիւն նոյնը չըլլալով հանդերձ, ներ- գաշնակութիւն գոյանայ: Անոնք երաժշտական խաղերու կը նմանին, որ իրենց մէջ գտնուած զանազանութիւններովը հանդերձ, կրնան իրա- ղու հետ համաձայնիլ: Սկզբունքի եւ համակ- բունքի նկարագրի եւ կենցաղի այնպիսի նը- մանութիւններ կան, մէն մի ինքնուրոյն տար- բերութիւններով, որ մին միւսին լրացուցիչը կ'ըլլայ: Անոնք հատուածակողման գոյներու կը նմանին, որ թէեւ իրարմէ խիստ տարբեր բայց նոյն արևուտն ճառագայթներէն կազմուած ըլլալով իրարու շատ լաւ կը յարմարին եւ մին պայծառագոյն եւ լաւագոյն է միւսով: Այսպէս նկարագրի ներդաշնակութիւն եւ ոչ թէ ընկե- րական մակարդակի նոյնութիւն է բարեկամու- թեան հիմը:

Ուրիշ կէտ մըն ալ բարեկամներու մէջ եր- կուտեք անձնական արժանիք գտնուելու է. վեհ, ազնիւ, գեղեցիկ, բարի յատկութիւններ երկու արտերը իրարու կ'սպեւնու են: «Մեծ միտք ունեցողները միայն կրնան ճշմարիտ բարեկամ- ներ ըլլալ»: Նուաաս եւ զձուձ մարդիկ չեն գի- տեր իսկ թէ բարեկամութիւն ի՞նչ կը նշանակէ: Շէշքափիւր կ'ըսէ «Բարեկամներն որ սուխ եւ որոնց հաւատարմութիւնը փորձուած է, երկա- թեայ օղակներով կ'ապէ զանոնք քու հոգեոյց»: Սակայն զանոնք երկաթեայ օղակներով մեր հոգիներուն հետ միացուցելու համար, անոնց մէջ արժանիք մը տեսնելու ենք: Միշտ բան մը գտնուելու է մէն մի բարեկամի մէջ, զոր միւսը կը յարգէ: Բարեկամութեան մէջ բարու- թեան հանգամանք մը կայ, որ անկէ չենք կրնար ազատիլ: Հայերէն բարեկամ բառը կը նշանակէ թէ այս երկու անձինք իրարու համար բարի կ'ամենալու եւ բարութեան առաջնորդե- լու են: Չարութիւն գործելու համար երկու մարդիկ իրարու հետ բարեկամ չեն կրնար ըլ- լալ: Երկու գողեր կրնան իրարու հետ դաշ- նակցիլ իրենց շար նպատակը ի դորձ գնելու համար, եւ կրնան իրարու հաւատարիմ ըլլալ: Բայց սոսնք քաւեկաւ չեն: Անբարոյական մար- դիկ կրնան միացման կապ մը գտնել իրենց մո- լութեանց գործադրման մէջ. սակայն անոնք բարեկամ չեն: Աւելի յարմար է կոչել զանոնք չարակաւ: որովհետեւ իրարու չարիք կը կամին եւ չարութեան կ'առաջնորդեն: Կան բարեկամ- ներ որ զիրար կը կործանեն, բայց այսպիսի- ները բարեկամ կոչել խօսքի մէջ հակասութիւն է: Իրաւունք ունէին նախնիք բարեկամութիւ- նը առաքինութեան կարգը գտնել: որովհետեւ անոր մէջ բարութեան տարր մը կայ: Չար մարդոց կասկածոս եւ չարակամ բնութիւնը շուտ մը կը խզէ այն կապերը, որ զիրենք մի- ացուցած էին ժամանակի մը համար:

(Մնացեալը յաջորդով)

ՏԸ ՈՒԷԹԻ ՄԱՍԻՆ

Տը Ուէթի համար ըսուեցաւ թէ՛ երկրորդ նաբոլէոն մը չէ, եւ ո՛չ ալ երկրորդ Գիշնէր մը: այլ՝ պարզապէս հրոսախուճըի մը յաջողակ պետը: Թողուածագիրը կատարելապէս իրաւունք ունի իր ըսածներուն մէջ, իրաւ է թէ՛ Տը Ու- էթ նաբոլէոնի նման մեծ foudre de guerre մը չ'է, եւ ոչ ալ Գիշնէրի նման գիտական սպայ մը, այլ՝ միջին հիմա Ափրիկէի մէջ, լրեսաւոր եւրոպայէն հեռու, անմանօթ ու անչուք մնացած պարզ զորական մը, որուն թրտնապալի պատու- բազմէն երկու օր առաջ, գոյութիւն ունենալը ոչ ոք գիտէր աշխարհին մէջ: զօրավար մը՝ ու- թուն անունը իր եւրոպայի շողողուն եւ ասա- զաւոր ուսնոցներով, կարմիր երեզներով, եւ բախակալը փողոկրէ սուրերով, բանակներու մէջ իրենց ստորագրանքներու վրայ յոխորտու- ցող collègue զօրավարներու ակունջը հասած չ'էր: մարդ մը՝ որ պատերազմին առտջ գուցէ նահապետական եւ աստուածաշնչ սկան կեանք մը կ'անցնէր իր ապարակին մէջ: զինւորական մը՝ որ ոչ եւրոպական զինւորական բարձրա- գոյն վարժարանները յսճախած է եւ ոչ ալ մեծ

stratogiste ներու եւ նշանաւոր tacticienներու գրքեր կարգացած է. այլ՝ երկուսն պարզուկ հրամանատար մը՝ որ այսօր սպարապետ եղած է եւ սարսափ կը պատճառէ բովանդակ իրաւա- նական կայսրութեան:

Տը Ուէթի անունը, եթէ չենք սխալիք, տուջին անգամ Բաարոպէրի կողմին ժամա- նակը լսեցինք: Տը Ուէթ հրամանատարն էր որ փորձած էր Օրանտեան 500 քաջերով Գրոնօբ շրջապատող երկաթէ ու կրակէ շրջանակը ձեղ- քել եւ տգատել «Ափրիկէի Ասիւնը»: բայց ի՞նչ կրնար ընել իր այդ փոքրաթիւ գնդովը այնչափ ջանջախիչ ուժերու գէժ:

Անկէջ յետոյ էր որ Տը Ուէթ անունը fureur ընել սկսաւ: ամէն անգամ փայլակի արագու- թեամբ Անգլիացոց չ'ապտած տեղը վրանին կը յարձակէր, հիւսնալի ճարտիկութեամբ թակարդ- ներ կը պատրաստէր, որոնց մէջ գլխահակ կը թա- ւայէին Անգլիացի զօրքերը: շրջմուլի հուր մըն էր, որ իր ուզած սխալագործութիւնները կա- տարելէ յետոյ, ամենափորձառու զօրավարի մը հմտութեամբ կը նահանջէր եւ Անգլիացիները իրեն ետեւէն քաշելով խեղճերուն հոգին սխա- նը կը բերէր: սնդիկի նման անքոնելի մարդ մը՝ որ իր թշնամիներուն հալածումէն եւ հե- տապնդումէն կը խուսափէր, կը ճողպարէր, եւ ուրիշ տեղ մը երեւալով անոնց քթին կը խըն- դար: վրանին յարձակելով, նահանջելով, դա- րան լարելով, հաղորդակցութեան գիծերը կտու- րելով, թնդանօթներ, ռազմամթերք, պաշար ձեռք ձգելով: Անգլիացիները նուրբական սար- սափ մը կ'զգային այդ մարդուն անունը լսե- լով: աշխարհիս մէջ թերթ մը չ'մնաց որ վրան գովասանքներ չ'զրէր: հեռաւոր անձնօթ ան- կիւն չ'մնաց, ուր Տը Ուէթի անունը գէթ ան- գամ մը չ'նշուէր, իր թշնամիներն իսկ հիա- ցումէ տարբեր զգացում մը չէին տածեր այդ աննկուղի գօրավարին վրայ, որ հմուտ ռազ- մագետի տաղանդով կը յաջողէր իր թշնամի- րուն ընելիք գործողութիւնները ու շարժում- ները լրտեսել եւ ըստ այնմ շարժիլ, միշտ յա- շտոյութեամբ իր նիւթերը կորսնցնելով թշնամին շուարեցնել:

Իր նահանջը, այն փառաւոր նահանջը՝ որ Գետտիսի «Բելը» երունը կը յիշեցնէ, կար- ձեւ ինչ գիւցազներու ասպետական ոգիէն մնա- ցած բոն մը ունէր իր մէջը, եւ ի՞նչ սրբազան երկիւզածութեամբ եւ անհամբերութեամբ աշ- խարհք արարատ կը հետեւէր հեռ սգիրներուն: «Իտնուեցաւ... չէ-փախաւ... կը բռնուի կոր... ալ այս անգամ խերը անիծուեցաւ... ալ չ'կրնար փախչիլ... մուկի նման թակ սրգը ինկած է... իր գերի բռնուելովը պատերազմը պիտի վերջանայ» բայց Ափրիկէի գօրավարը Լորա Ռոպըրթսի մը եւ անյաղթելի կոչուած Գիշնէրի մը, քթէն բռնելով, զինւորական տա- րեգրութեանց մէջ նմոնը չը տեսնուած նահան- ջով մը յաջողեցաւ 6 զօրաբանակներու ծայրա- մէտ (convergent) շարժումէն խուսափել եւ իր 4-5 հազար, պարտասած, ռազմամթերքներն հը- ստած, ասճանկի շուրջով եւ հակաշարժումներով ուժասպառ քաջերը, վասալ գետնի ապահով ան- ցնել եւ զանոնք թրանսլալ հասցնել ու ինքը գարձակ 300 անձն սղոհներու ի գլուխ՝ կրկին ետ գտնալ, իր քաջագործութիւնները իր համ- բաւաւոր raidերը շարունակելու: Տը Ուէթ նա- խագած Սթէյնի հետ յաջողեցաւ անկասութեան ոգին վառ պահել Օրանտի մէջ եւ այսօր իսկ Օ- րանտի հատարակապտութեան այդ երկու աս- ածանաւորները պարզ զինւորներու պէս հրա- ցանը ուսերին կը շարունակեն իրենց աննը- կուն կուր: Տէլէթատրը գրուելէն յետոյ, ուր 500 անգլիացի զերի բռնեց եւ ապա սպառ արձակեց, մազ մնաց որ կրկին ձեռք իյնար: ի՞նչ սոսկալի իրողարձութիւններով լի տեսակ մը Barres էր, որուն միակ թիրախը, նպա- տակակէտը ինքն էր եւ սակայն իր բազմաթիւ ոտխները չ'կրցան զայն գերի բռնել: Պէջը գօ- րավարը անհուսառալի յանդգնութեամբ մը զին- քը պաշարող շրթան կտրեց անցաւ:

(Շարունակելի) ԼԵՒՈՆ

Հ Ե Ռ Ա Գ Ի Ր Ն Ե Ր

Ս. Բէթէրոպուրկ 6 Մարտ. — Ուսա- նոյնները մեծ խռովութիւններ ծագելու պատճառ տուած են. ոստիկանութիւնը յարձակմամբ ցրուած է ամբար. բազմա- թիւ վիրաւորեալներ կան. 200 հոգի ձեռ- բակալուած են:

Կ. Պոլիս 6 Մարտ. — Պաշտօնապէս կը հերքեն այն լուրը թէ Պուլկար սահմանա- գրիին վրայ 50000 թուրք զօրքերու հա- մախմբում կը կատարուի:

Քէյրթաուն 7 Մարտ. — Տը Ուէթ Ֆի- լիբօքսի կ'ուղղուի: 300 Պէջը Ապրիլի վրայ յարձակած է եւ մղուած են. Գարի գաղութին շատ մը նահանգներուն մէջ թերամարտներ տեղի ունեցած են:

Պէրլին 7 Մարտ. — Կիյեօի կայսրը կառ- ղով Պէթի փողոցէն անցած ատներ, գոր- ծաւոր մը երկաթի կտոր մը նետած է, որ զայն ձախ այտէն թեթեւօրէն վիրաւորած է, այս մարդը Ֆէկլանտ կը կոչուի և վեր- նառութեան (epilepsie) ենթակայ է եղեր:

Պէրլին 7 Մարտ. — Կայսեր այտի վէր- քը սակորին հասած է, Ն. Վ. ք շարթ մը անկողնոյ պիտի ծառայէ:

Բէթէրոպուրկ 7 Մարտ. — Տը լարէյ զօրա- վարը Լիխթէնպուրկի վրայ յարձակած է: Նորթհրմուտի միւլիլլըրմներէն հաղա- րապետ Ֆլէշըր և տեղակալ Հըլ սպան- նուած են. Լորա Գիշնէր օգնաւորը կ'ու- ղարկէ:

Չորեքշաբթի օրուան թուով պիտի ըս- կանք հրատարակել «Արշալոյս» յի աշխա- տակից ԳՄՈՒԻ Կիպրոսէն զրկած մէկ գրու- թիւնը, Տիկին Սրբուհի Տիւրաբի մասին, որ Իրական Աշխարհէն ՇԻՋԱՆՈՂ ԱՍՏՂԵՐԸ վերնագիրը կը կրէ:

Տեղւոյ անձկութեան պատճառաւ, նոյն- պէս չորեքշաբթի թուով պիտի հրատարա- կենք «Արշալոյս» յի բարեկամ և պատա- հական աշխատակցին, Տիար Տիգրան Հա- ճըրլեանի ամենակարեւոր մէկ յօդուածը ԹՈՒՄՈՍԸ ԱԶԳԻՆ ՏԱՆ ՄԷՋ, վերնագրով, որ Զակաղիկէն զրկած է մեզ ի հրատա- րակութիւն:

ՏԵՂԱԿԱՆ ԼՈՒՐԵՐ

Երէկ Ն. Բ. Խոթիլը Ապտինի պալա- տը եկաւ. առաւօտուն ընդունեց Վինկէյթ փաշայի օգնական զօրավարը և ժամը 11 ու կէսին Օրլէանի Հանրի Իշխանը:

Ն. Բ. իր ուրբաթու աղօթքը կատա- րեց Սէյիանէլ-Հիւսէյնի մզկիթը, և ցորե- կէն յետոյ նախագահեց Բուսարանական ցուցահանդէսի բացմանը:

ԵԳԻՊՏՈՍԻ Ազատ Որմնագրաց ընկերու- թեան Պետը 200 եգիպտական սակի յանձ- նած է Գահրէի Իտալական հիւանդանոցին:

Ն. Վ. Պոլոս Փաշա Նուպար առջի օրը իր Շուպրայի կալուածին մէջ իր հնա- րած արօրին նոր փորձերը կատարեց, որոնք շատ հետաքրքրեցին Ն. Վսեմութեան հրա- յիրեալները:

«Գորէսօնուսանս էփրսիէն» յի Մարտ 12ի թիւը Ն. Վ. Պոլոս Փաշայի լուսանկարը և կենսագրութիւնը պիտի հրատարակէ: ԵՐԵՍՓՈՒՍԱՆ ԺՈՂՈՎ. — Երեկ Ազգային Առաջնորդարանի մէջ, ընդ նախագահու-

Թեամբ Գեր . Յովսէփ եպիսկոպոս Այվազ-
եանի և Ատենայեան թեամբ Եր . Վ . Տիգ-
րան Փաշայի գումարուած էր Պատ . Երես-
փոխան ժողովն :

Տրուած որոշումները դեռ Առաջնոր-
նորդարանի չորս պատերուն մէջ կը մնան
և ասոր պատճառը շատ պարզ է :

Երեք չորս տարի առաջ « Փարոս » շրագ-
րի Տնօրէն-Թմբազիրը փորձած էր ներկայ
գտնուել Պատկ . Երեսփոխան ժողովոյ նրա-
տին . սակայն Պատ . անդամը , դեռ ան-
վարժ մամուլի ներկայացուցչին տալիք ան-
հանգստութեան , մերժած էին ընդունել
զայն . բնական էր թէ այս անգամ ալ ու-
րիշ փորձեր ըլլալու պէտք չէր մնար : Բայց
ժամանակն է որ Պատկ . Երես . ժողովոյ
առաջարկները թէ՛ իրենք ժողովուրդի քուէ-
ներովը ընտրուած և ժողովուրդի ներկա-
յացուցիչներն են . պէտք է որ իրենց նիս-
տերը յետ այսու տեղի ունենան ազգային ան-
հասանելու ներկայութեանը , կամ գէթ մա-
մուլի ներկայացուցիչներու իրատեսքները
յարգուին :

Գեր . Յովսէփ եպիսկոպոս գիտէ ար-
դէն թէ Պաշայ մէջ ինչպէս տեղի կ'ունե-
նային Երեսփոխան ժողովոյ նիստերը . պէտք
է որ տեղւոյս Երեսփոխան ժողովոյ Պատ .
անդամներուն ալ հասկցնէ այդ ամենը և
ստիպէ որ յետ այսու Երեսփ . ժողովները
հրապարակաւ տեղի ունենան . այսպէսով
կը կարծենք թէ Յովսէփ եպիսկոպոս կըր-
նայ բարձրանալ յայս ժողովուրդեան , եթէ
պէտք պիտի ունենայ անոր :

ՀԵԼՎԱՆԻ ՎԻՃԱԿԱՀԱՆՈՒԹԻՒՆ

ՈՒՐՔԱՍ 8 ՄԱՐՏ 1901

2691	3775	282	4581	352	7518
9390	6221	7142	3195	1972	681
6050	8064	2556	579	6022	3716
8162	8735	6876	8547	8334	7021
	8123	2088	956		

ԱՅԼ ԵՒ ԱՅԼՔ

« Բիրտիտ » թղթակիցներէն մէկը կը
պատմէ թէ՛ Սօմաթի մէջ տեղացի մը
Շէրիի դատարանը ներկայացրէ է դատա-
ւորէն հետեւեալ կարգադրութեան վրայ
կարծիք առնելու :

« Կին մը կը սիրեմ — յայտարարած է-
որ իմ բարեկամներէս մէկուն կինն է . նա
ալ իմ կնոջս համար խենդ կ'ըլլայ . իրա-
րու հետ այնպէս համաձայնեցանք որ կի-
ներու փոխանակութիւն մը պիտի ընենք .
իմինս յղի է , իսկ անորը ոչ . ասոր վրայ
իբր հատուցում ինձի իր կնոջմէն զատ մա-
տակ էջ մըն ալ պիտի տայ » :

Աւելորդ է ըսել թէ դատաւորը խն-
դալով , այդ կարգադրութեան անկարե-
լիութիւնը պարզեր է մեր պարզամտին :
ՍՊԱՆՆՈՒԹԻՒՆ ՄԸ ԵՐԻՈՒԵԱԼ ԴԱՏԱՐԱՆԱՅ
ԱՌՁԵԼ

Ոչբերգական դէպք մը պատահած է
Նորջրի դատարանին մէջ : Դատաստանի
հանուած էր ճարտի Սիմէօլի անուն 24
տարեկան երիտասարդ մը , Բիանուրա գա-
ւառակը ծնած , որն որ ամբաստանուած
էր , խաղի ժամանակ եղած կուռի մը մէջ .
նմանապէս Բիանուրա բնակող Անթոնիո Հէկ-

րէնի անուն մարդ մը սպաննած ըլլալով :
Սրահը Բիանուրայիներով լեցուած էր ,
որոնք համարուած էին Սիմէօլի յանցաւ-
թեան , և թշնամական ցոյցեր կ'ընէին .
մինչդեռ ամբաստանեալին փաստաբանը զայն
կը պաշտպանէր :

Ունկնդրութիւնը ցորեկին ընդհատուե-
լով , ոստիկանները ամբաստանեալին յատ-
կացուած վանդակէն հանեցին զայն դարձ-
եալ իր խցիկը տալիս նորապէս համար : Ամ-
բաստանեալը յուզուած ամբոխին մէջէն
անցնելու ատեն , շատ մը կիներ վրան
յարձակեցան և երեսը թքնելով զայն նա-
խատեցին :

Մինչդեռ ոստիկանները զանոնք ետ
կը մղէին , պատանի մը ստուամ մը ընե-
լով , կայծակի արագութեամբ երկայն դա-
շոյն մը խրեց Սիմէօլի փորը և փախաւ :

Սիմէօլի մահացու կերպով վիրաւոր-
ուած աղաղակ մը արձակեց և մարած գե-
տինը տապալեցաւ : Մինչդեռ զայն Տէ Բէլ-
լէկիինի հիւանդանոցը կը փոխադրէին ,
երկու պահակ , որոնք մարդասպանին ե-
տեւէն ինկած էին , կը յաջողին զայն ձեր-
բակել և Գանձաւորաց դիւանը տանիլ :
Ճովանի , որ 16 ասրեկան պատանի մըն
է , յայտարարած է թէ՛ Սիմէօլիին սպան-
նած Հէկիինիին համահայր եղբայրն է և
այդ սպանութեամբ եղբորը վրէժը առնել
ուզած է և ոչ ուրիշ բան :

ՏՕՔԹ ԲՕՐՆՖԷԼՏ

Վ.ԿՍԵԱԼ ՎԻԷՆԱՍԻ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԷՆ

Նախկին Ներքին Բժիշկ Վիէնայի գըլ-
խաւոր հիւանդանոցներուն : Մասնագէտ
միզանցքային հիւանդութեանց , Գաղղիա-
կան տխտի , կոկորդի , թիթի և բերնի
հիւանդութեանց :
Ամէն օր հիւանդ կ'ընդունի կէս օրէ
առաջ ժամը 10 էն 12 , իսկ կէս օրէ վեր-
ջը ժամը 3 էն 5 , իր տունը Շէրիֆ փա-
շա փողոց , ԱՂԵՔՍԱՆԴՐՈՒՄ :

ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ

ՊԱՇՏՕՆԱԿԱՆ ՑՈՒՅՍԿ
Ուար Օֆֆիսը Փետր . 26 ին խորհրդա-
րանի անդամոց մանրամասն ցուցակ մը բաժ-
նած է , որուն մէջ Հարաւ . Ափրիկէ գըր-
նուող Անգլիացի զօրաց ճիշդ թիւը կայ :
Այս զօրքերը 204, 949 հոգիի կը հաս-
նին և այսպէս կը բաժնուին .
Կանոնաւոր բանակ . — 4305 սպայ 137,
185 ենթասպայ և զօրք :
Գաղթավայրի զօրքեր . — 1339 սպայ ,
27000 ենթասպայ և զօրք :
Կայսերական Եօմէնրի . — 495 սպայ ,
75000 ենթասպայ և զօրք :
Կամաւոր . — 200 սպայ , 7500 են-
թասպայ և զօրք :
Միլիցիա . — 725 սպայ , 18700 են-
թասպայ և զօրք :
Հարկ է նկատի առնել պաշտօնական
ցուցակին մէջ թէ՛ 1899 Օգոստ . 1էն այ-
սինքն թշնամութեանց սկսելէն 2 ամիս ա-
ռաջ , մինչև 1901 Յունուար 31 , Թրանս-
վալ զրկուած է 282379 հոգի :
Կորուստները սպաննուած , վիրաւոր-
ուած , հիւանդ , հայրենիք դարձած և ըն-
50000ը կ'անցնի :

Նոր-Կեանքէն կը քաղենք հետեւեալ-
ները :

Պ . ԼԷՈՒՆ ՄԱՐԻՆԻԿԻ , ֆրանսացի ծանօթ
հայասէրը , սո մեր գաւտով զբաղողներուն
առաջիններէն եղաւ իր երկրին մէջ , վեր-
ջերս Բարիկի մէջ՝ նոր բանաստեղծութիւն մը
բրաւ , իրեն նիւթ ունենալով « Հայաստանի
կայսութիւնը և Եւրոպայի պարտքը » : Բա-
նաստեղ յիշելէ յետոյ ջարդերը , եւրոպայի
թերահաւատութիւնը , մէկ քանի խիղճերու
յուզումը , գիւտնադիտական պատրուակնե-
րը որոնք կառավարութեանց անշարժու-
թեանը ծառայեցին , Լուպանֆի դերը , յե-
տոյ թիւրք կառավարութեան արդի դրու-
թիւնը որ նոյն սճիւրները կը դործէ անձայն
միջոցներով , ի վերջոյ յայտնեց այժմ տի-
րող երկիւղներն , մեծ կոտորածի մը մօտա-
լուտ վտանգը , եւ անհրաժեշտ հարկը որ
Եւրոպա պէտք եղածը ընէ առանց ժամա-
նակ կորսնցնելու : Պ . Մարիլիէ , ինչ ինչ
նշաններէ հետեցնելով և ինչ ինչ աղբիւր-
ներէ քաղելով իր տեղեկութիւնները , հա-
ւանակէն կը նկատէ որ Պետութիւնները պի-
տի միջամտեն . . . :

Կիլիկիոյ մէջ նոր կոտորածներու
պատրաստութեան լուրերը եւրոպա հասած
ըլլալով , ֆրանսական կառավարութիւնը ,
իբր ազգարարութիւն , հինգ մարտանաւ կի-
լիկիոյ ջուրերը զրկած է :

ԱՉԳԱՑԻՆ ՅԱՆՁՆԱԽՈՒՄԲԸ . — Անգլի-
ոյ թագաւորը իր անձնական քարտուղարին
միջոցաւ շնորհակալութիւն յայտնած է Ա-
մերիկայի Այգային Յանձնախումբին Ատե-
նայեան Պ . Գաբրիէլեանի , այն ցաւակցա-
կան ու համակրական արտայայտութեանց
համար , զոր նոր թագաւորին ուղղուած հե-
ռագիրը կը պարունակէր :

ԿՈՎԱՍՍՆԱՆ ԻՇԽԱՆՈՒԹԻՒՆԸ՝ սրտչեր է
թիֆլիսի Արհեստանոց-գործարանէն շնչել
տեղական լեզուներով դասաւանդութիւն-
ները : Միայն և միմիայն ուստական լեզուն
պիտի տիրապետէ :

ԵՐԻՏՐԱՍՏՐԻ ԹԻՒՐԿԵՐԸ . — Պաշայ ոս-
տիկանութիւնը փետրուար 19 երեք ջարթի
գիշեր Ղալաթիոյ մէջ մեծաքանակ ուժա-
նակ , և բազմաթիւ յեղափոխական թուղ-
թեր ձեռք անցուցած է . ասոնք երիտա-
սարգ Թիւրքերուն կը պատկանին եղեր :
Բազմաթիւ ձերբակալութիւններ տեղի ու-
նեցեր են :

ՈՍՏԻԿԱՆՈՒԹԻՒՆԸ Պոլիս փակած է
պուլկարական տպարան մը , իբր հետեւանք
հակամակեդոնական քաղաքականութեան :

Պ . ՎՈՐՄԵ Բարիկի մէ աշխարհի մեծա-
զոյն թատրոնին , Գոմէտի-Պրանսէզի գըլ-
խաւոր գերասաններէն մին է որ այս օրե-
րս ալ ասպարէզէն քաշուեցաւ հանգստա-
նալու համար : Այս առթիւ իր մասին գըր-
ուած յօդուածներէ կը տեղեկանանք թէ՛
Պ . Վորմս իբր գրաչափ սկսած է կեանքը ,
ու մասնաւորապէս իւր հայրենի գրաչար ,
այնպէս որ իր ընկերները « Հայր » կը կո-
չէին զինքը : Բարիկ տպագրուած և Ալէք-
սանդր Բ . Չարլին նուիրուած հայրէնէ ֆը-
րանսերէն բառգիրքը ամբողջ ինք շարած է :
« ՓԱՐԻ Ն ՈՒՎԷԼ » 25 փետր . թուակա-
նաւ հետեւեալները կը գրէ .

Առաջիկայ շաբաթ երեկոյ Փոթիլի Գա-
ֆէ Վօլթէուի մէջ հայկական երեկոյթ մը
տեղի ունենալու է ընդ նախագահութեամբ
L'Arménie ի Տնօրէն Պ . Մինաս Չէրպի :
Ճառախօսութիւններ և երգեցողու-
թիւններ տեղի պիտի ունենան և ուղերձ

մը պիտի պատրաստուի Pro Armenia թերթի Խմբագրութեան և աշխատակիցներուն: ԱՆՍՍՏԵՂԻ ԵՒ ԴԵՐԱՍՏԱՆՈՒՀԻՈՅ Ա. ՄՈՒՍՆՈՒԹԻՒՆ. - Փարիզցիները հետաքրքրող ամենանոր լուրն է բանաստեղծ Ժան Խիչքէնի ամուսնութիւնը Օրիսթը Լափարսըրի հետ, որ Օտէոն թատրոնի ամենալայնի գերասանուհիներէն մին է:

Այս միութիւնը շատերուն քննադատութեան, ծիծաղին և զարմացման արժանացաւ. զանազան խրատումներ կը լսուին երկուքին վրայ ալ. գերասանուհին իր բազմաթիւ բարեկամներով և բանաստեղծը իր քաղաքաւորութիւններով: Կ'ըսուի թէ՛ բանաստեղծը տեսնելով գերասանուհուն կատարելութիւնները իւր գերին մէջ, սիրահարուած է անոր և կուզէ անպատճառ ամուսնանալ անոր հետ. «Փարի նույն է» յաջողութիւն կը մաղթէ բանաստեղծին և գերասանուհուն:

ՆԱՄՐՏՏԻՆ ԵՒ ՕԳՍՃՈՐՏ

Մի խորոզ որ կ'արժէ 4000 դրշ.

— Հէ՛ խոճա. ինչ պիտի անենք այս օրս ալ, ասաց Տիկինն խոճայի:

— Ինչ պիտի անենք, մի բան որ կը մընայ մեզ. մի վերջին ճիւղ եւս. ես՝ յարօ Լիպի մեռ... պատասխանեց նմա խոճան. ծախենք մեր խորոզն. գուցէ ապրեցնէ մեզ մինչև... դատաստան:

Ատուռն խոճան ձեռք առած մի չուան՝ որու կապուած էր խորոզի գլուխն. գնում էր պազար. Հազիւ թէ հասաւ մի անկիւն՝ անդէն պուլուաց մի պատանի:

— Ու՛ր բարով խոճա՛, ուր ես տանում այդ ճանուղը մաշա՛ ալլահ:

— Դէ՛ ինչ ասես սրիկայ. աս ինչ ճանուղ, ուր ես տեսնում ճանուղը:

— Բայց ինչ է այն որ քաշում ես:

— Հո՛, խորոզ է խորոզ...:

— Ձե՛՛ ճանուղ է ճանուղ...:

Սոճան սրտաբեկ անկնում է մտախոհութեանց մէջ, գնալով դէպի պազար:

— Այդ ինչ գեղեցիկ ճանուղ է ասում, մի անցորդ, ու՛ր ես քաշում այդ անասունը:

— Սորո՞քս կ'ասես:

— Ճանուղդ կ'ասեմ, քանի՞ ես պահանջում...:

— Սորոզի՞ս...:

— Ճանուղդ...:

Ուրիշ մը մէջ մտնելով

— Սաշոր այդ ճանուղը հինգ հազար դրշ. կ'արժէ, նէ մալ...:

Սոճան իսկ չիմթելով քարշ է տալիս խորոզն, որ պազար հասնելով ճանուղի է փոխուում եւ ծախում է նրան 4000 դրշ: Անցեալներս մի բողբոջներ է իրուում մեր քաղաքի մէջ. խորոզ մ'է գալիս մեր պազարին. անդէն նոր-Օր մ'է կանգնում եւ դիմաւորում նրան «բարով ես եկեր ճանուղ ախպար:

— Ձե՛. ես մի խորոզ եմ կրկնում է գէվալըն:

Բայց նազարէթ մ'է միջամտում, «նաւուղ էք. հոշ ես դալիս»:

Մեր բողբոջները ալ չէ սպասում երորդ դիմաւորութեան և ինքզինքը ճանուղ կարծելով՝ ներկայանում է մեր ազգային պազարի, եւ նրանք ալ ճանուղի տեղ են ընդունում մեր խորոզն, որ բոլոր յոյսերն կտրուած ձգում փախում էր հայրենի կուռքէն լաւ ճանաչելով իր խորոզութիւնը:

Բայց մերիներն որ անա զամի իրբեւ անուղ ճանչցան, զարմացմամբ պիտի տեսնեն իրենց օգտակար չարքասանի երկոտանի մը մեքաւորփոցունը:

ԼԱԼԱՅ

Տպագրութիւն ԺՈՂՈՒԴԴԱԿԱՆ ՏՊԱՐԱՆԻ

Ս Ի Ն Կ Ե Ր

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԵՒ ՄԻԱԿ ՆԵՐՎՈՅՑՅՈՒՑԻՉ Ժ. ՆԱՅՏԼԻՆԿԻՐ

Պալարի փողոց. Խաչնետարի սեփականութիւն, Պրիսթ-Սթրիթ Երևան, Գաթէ Տը Լա Պուրօի կից:

Հին եւ նոր ԱՇԽԱՐՀՆԵՐՈՒ ԲՈՂՈՐ ԲԱՂԱՔՆԵՐՈՒՆ ՄԷՉ 6500 ՄԱՆԱՃԻՂԵՐ ՈՒՆԻ

Աշխարհի ամենէն լաւագոյն կարի մեքենաները ՍԻՆԿԵՐ ներս են եւ ասոնցմէ մինչև ցարդ 17,000,000 ծախուած է:

400 է աւելի վիսլայակներով և մեքայներով վարձատրուած, Երաշխատեալ մեքենաներ,

ԱՄԵՆԷՆ ՄԵԾ ՎԱՐՁԱՏՐՈՒԹԻՒՆԸ

ԱՌԱՋԻՆ ՄՐՅԱՆԱԿ

Փարիզի 1900 ի Տիեզերական արուեստահանդիսին մէջ ասացած է:

ՀԱԳԹԱՅԹԻՉ ԲՐՈՒՍԻՈՅ ԿԱՅՍԵՐՍԿԱՆ


ԱՐԲՈՒՆԻԲԻՆ

ՀԱՅԹԱՅԹԻՉ ԱՆԴՂՈՅ ԿԱՅՍԵՐՍԿԱՆ

ԵՒ ԹԱԿԱՒՈՐՍԿԱՆ ԱՐԲՈՒՆԵԱՅ

ՀԱՅԹԱՅԹԻՉ Ե. Բ. ՆՏԻՎԱԿԱՆ ՏԱՆ

Կեղծերէն զգուշանալ, ուշադրութիւն դարձնել իւրաքանչիւր մեքենայի վրայ ՍԻՆԿԵՐ ի յասկանչին:



Չրի դասեր և նորոգութիւններ, ՍԻՆԿԵՐ մեքենայից համար, յաճախորդաց տուններուն մէջ:

Վճարմանց Դերութիւն

Փոխանակութիւն ինչմեքենայից եւ նորոգութիւն ամեն կարգի Մեքենայից

ԳԻՆ ՉՈՓԱՒՈՐ

ՄԱՆԿԱՐԱՐՉ

ՏԻԿԻՆ ՍՈՍԻՍ ԱԶԳԱՊԵՏԵԱՆ

Շարա-Ապսիդ-Ազիզ

Վերջերս իւր բնակութիւնը Խուրուսթիչէն փոխադրած է Շարա Ապսիդ Ազիզ, Ալի փաշա Շէրիֆի պարտիզին դիմաց, Անճեա պէյ Ապսիդ Բազիլի 20 թիւ սեփականութեան մէջ:

Տիկին Սօֆիկ Ազգապետեան իւր փորձառութեամբ եւ յաջողակութեամբ արդէն ծանօթ ըլլալով զանիւրեմակ ազգայնոց եւ նոյն իսկ օտարաց, աւելորդ կը համարուի զայն յանձնարարել իւր խնամոցը պէտք ունեցողներուն:

Վկայեալ ազբատներուն համար ձրի դարմանում:

ՄԻՄԱԲ ԵՐԲԷՔ ԱՌԱՅ ԺԱՄԱՅՈՅԻ

Քանի որ ՍԷԼՎԱՃԵԱՆ վաճառատան մէջ (ի Մուսթի) պիտի գտնէք միմիայն 22 ՂՐՆ ի նիքէլ, կոթէն լարուող սիրուն ժամացոյցներ որոց լաւ բանիւր երաշխաւորեալ է նոյնպէս ամեն տեսակ ոսկի ժամացոյցներ, 120 ՂՐՆ է սկսեալ մինչև 2500 ՂՐՆ: Ինչպէս նաև արծաթ ոսկեպատ, նիքէլ, և օքսիտէ ժամացոյցներ. պատի և ըմսօղի լալմազան Բանտիլիներ և ամեն ճաշակի յորմար Գոհարեղէնք:

Ճոխ հաւաքածոյ ըստ Ամերիկեան Յօ. Կոնգրեսներու:

ԺՈՂՈՂՐԴԱԿԱՆ ՏՊԱՐԱՆ ԵՒ ԹՂԹԱՂԱՃԱՌԱՏՈՒՆ

ԱՐՇԱԼԱՅՍԻ

ՀԻՄՆԵԱԼ 1 ՄԱՅԻՍ 1900

ՇԱՐԻԱ ԱՄՏԻՆ ԱԶԻԶ ՍԿԻՐԸ

Օստանիյե դեղատանին դիմացի փողոցին մէջ:

Ժողովրդական Տպարանին մէջ կը պատրաստուին:

Այցեխարտեր, Երաշխաւորեալներ, Գիրքեր, Հրատարակութիւններ, Մանրագրեր, Տեղեկագիրներ, Կանոնագիրներ, Տոմարներ և այլ և այլ տպարանի վերաբերեալ յանձնարարութիւններ կը վաճառուին հետեւեալ դրերն:

1. ԲՆԱՇԵՒԱՐՀԻԿ ԲԱՌԱՐԱՆ Ի Ա. և Բ. պրակներն, որոնք նոր հասած են և որոց մասին արդէն խօսուած է «Արշալոյս» մէջ:

2. ՈՐԲՈՒՆԻ, որ նոյնպէս նոր հասած է և որոյ ի Թուրքիա մուտքը, ինչպէս կը լսենք, արդիւում է եղեր:

3. ՀՍԻՍՔԱՅԻՆ Հայոց ժողովրդական երգերու, Փարիզ ապագրեալ, Տնօրինութեամբ Տ. Լեոն Եղիազարեանցի:

4. ՉՈՒՐԱՐՃԱԼԻ Անիքթոսներ և ժողովրդական վէպիկներ կամ Մարդկային Կենաց Վարագոյրը և ուրիշ նոր հրատարակութիւններ:

ՏՃԻ ՄԻՉՈՒԱԼ ԼԱՅՑ

ԿԵՆԱՅ ԱՊԱՅՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ ԱՇԽԱՐՀԻ ԱՄԵՆԷՆ ՀԱՐՈՒՍՏԵ ԵՒ ԿԱՐԵՒՈՐԸ ԵՐԱՇԽԱՒՈՐԵԱԼ ԴՐԱՄԱԳԼՈՒՆ 1 ՄԻԼԵԱՐ 437 ՄԻԼՈՆ

Ապահովագրեալներուն կը բաժնէ ամենէն աւելի շահաբաժինները:

Ապահովագրեալներուն արդէն վճարած է կամ ինչպատ իրենց գումարած է 3 ՄԻԼԵԱՐ 480 ՄԻԼՈՆ՝ որ գրեթէ աշխարհի ուրիշ որ և է ընկերութեան մէկ միլիարդ աւելի է:

Ս. ԼԵՕՆԱՐ ընդհանուր ներկայացուցիչ և Գահիրէ

Աշխարհի մէջ գտնուող ուրիշ որ և է ընկերութեան աւելի երաշխաւորութիւններ, ընդարձակ գործառնութիւններ և հրապարակի վրայ աւելի ապահովագրութիւններ ունի և աւելի ապահովագրի կը գանձէ:

ԱԼԷԲՈՒՍ ԼԱՎԻՉՈՆ զԼիւսաւոր գրքատան կատար յ'Ազեքսանդրիա: